

26.

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈԶ ԼՈՒԺՈՂԿՈՍԱՏ

Խ

Թ Ր Ա Գ Ի Շ

ՄԵԾՈՎՀԱՍԱԿՆԵՐԻ ՄԻԶՆԱԿՈՐԳ ԴՊԲՈՅՑԻ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

5—10 դաստիարակութեալ համար

ԳՐԱԸՆ Բ. 20 ԿԸՊ.

ОБЯЗАТЕЛЬНЫЙ  
ЭКЗЕМПЛЯР

491.99(07)  
0-089

ԼՈՒԺՐԱՏ

ԵԵՐԵՎԱՆ

1940

18 MAY 2010

15 MAY 2013

## ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

### ԲՈՅԱՏՐԱԿԱՆ

Մեծահասակների գպրոցի 5—7 դասարանների հայոց լեզվի ծրագիրը կազմված և այն հաշվով, վոր ամփոփվի միջնակարգ մասսայական գպրոցի լեզվի ամբողջ կուրսը։ Նկատի ունենալով, վոր մեծահասակների գպրոցում ժամերի թիվը համեմատաբար քիչ և և տարվա մեջ ուսման ակտությունը համեմատաբար ավելի կարճ, ծրագրի միջից վերացված են կրկնվող բաժինները, մշակված և հետևողական կուրս։ Ծրագիրն սկսվում և նախադասության ուսուցմամբ, ըստ վորի պարզ նախադասության շարահյուսությունը սպառվում և 5-րդ դասարանում բոլոր մանրամասնություններով։

Պարզ նախադասության շարահյուսությունը դառնում և բազա ձեւաբանության ավանդման համար։ 5-րդ դասարանի ծրագրում տրվում և պարզ նախադասության շարահյուսությունը, հնչյունաբանությունը, բառակազմությունը, ուղղագրությունը, իսկ խոսքի մասերից՝ գոյականը, ածականը և թվականը։ 6-րդ դասարանին բաժին և թողնվում ձեւաբանության մնացած մասը (դերանուն, բայ, մակբայ, կապ, շաղկապ և ձայնարկություն)։

Այսպիսով յերկու դասարաններում ավարտվում են պարզ նախադասության շարահյուսությունը և ամբողջ ձեւաբանությունը։

7-րդ դասարանին թողնված և բարդ նախադասության շարահյուսությունը և կետադրությունը։

Նյութի այս ձեմի դասավորությունը ոգտավետ ենակ մեթոդական տեսակետից, քանի վոր բարդ նախադասության և կետադրության ուսուցումն ավելի դյուրին և դառնում պարզ նախադասության և ձեւաբանության ուսուցումից հետո։

Մյուս կողմից՝ շարահյուսությունն ոգտագործվում և ձեւաբանության ուսուցման համար, իսկ ձեւաբանությունը՝ շարահյուսության ուսուցման համար։ Այս աշխատանքները նշանակություն ունեն այս գործությունների համար։



բականական գիտության մեջ այս յերկուսը միմյանց պայմանաւորում են և միմյանց ամբողջացնում:

8—10 դասարանների համար թողնված են քերականության վարժություններ, վորոնք առիթ են տալիս կրկնելու անցած քերականությունը:

Այդ դասարաններում արվում են նաև լեզվի պատմության և տեսության տարրեր, վորոնք անհրաժեշտ են վոչ միայն քերականությունը հասկանալու համար, այլև զրականությունը և գրականության պատմությունը: Լեզվի պատմության տարրերը պետք են կապել գրականության պատմության հետ. այսպիս հին գրականության պատմությունն անցնելիս պետք են գաղափար տալ գրաբարի մասին, միջնադարյան տաղերգուներն անցնելիս՝ միջին հայերէնի մասին, համեմատելով այն գրաբարի հետ: Աշխարհաբար վեպի պատմությունն սկսելով, պետք են խոսել զրական աշխարհաբարի միզրնավորման և զարգացման մասին և խորհրդային գրականության մասին խոսելիս՝ պետք են խոսել մեր գրական լեզվի նորագույն ետապի մասին:

Արևմտահայ գրողները, Սայաթ—Նովան ու Սունդուկյանն ավանդելիս՝ պետք են գաղափար տալ հայ բարբառների մասին, թեթևակի նշելով նրանց հիմնական առանձնահատկությունները:

Պետք են նկատի ունենալ, վոր այս գասարաններում լեզվի պատմության կամ տեսության սիստեմատիկ կուրս չի ավանդվում, այլ տրվում են միայն գրանց տարրերը, ուստի այս բաժիններին արվող ժամանակը չպետք են գերազանցի 10 ժամից՝ բոլոր յերեք գասարանները միասին վերցրած:

Հետաքրքրվող աշակերտներին կարելի յեն հանձնարարել կարգայու հրավարակում յեղած գրականություն:

Քերականության ուսուցումը պետք են կատարել կատարելով գրավոր և բանավոր խոսքի և գրական ընթերցանության աշխատանքների հետ:

Քերականության ուսուցումը միշտ պետք են լեզրափակել զրական տեքստերի վրա կատարվող զրավոր վարժություններով: Կանոնի ուսուցումը հսմեմատաբար ավելի քիչ ժամանակ պետք են խլի: Քերականությանը տրամադրվող ժամանակի  $80\%$  պետք են տրամադրել զրավոր և բանավոր վարժություններին: Ծրագրում արված են նաև բանավոր և զրավոր խոսքի զարգացման կուրս, վոր համապատասխան և մասսայական միջնակարգ դպրոցի կուրս:

Լեզվի ուսուցման հաջողությունը զգալի չափով կախված է դասագիրքն ոգտագործելուց: Յուրաքանչյուր սովորող պետք են ձեռքի տակ ունենալ թե քերականության և թե գրական ընթերցանության դասագիրքը: Քերականության ուսուցումը՝ թելադրելու կամ կանոնը գրատախտակին գրելու և սովորողներին արտագրել տալու միջոցով վասում և յուրացման գործին, նաև անտեղի ժամանակ վատնում: Պետք են հիշել, վոր գիրքը աշակերտների յերկրորդ ուսուցիչն են:

## Ծ Ր Ա Գ Ի Ր

Տ-ՐԴ ԴԱՍԱՐԱՐԱՆ

### 1. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ա. ՆԱԽԱԳԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Մատճառթյուն, խոսք, նախագասություն, պարզ և բարդ նախագասություն, պարզ նախագասության գլխավոր անդամներ՝ յենթակա և ստորոգյալ, նրանց միանությունն ու համաձայնությունը, համառոտ նախագասություն, ընդարձակ նախագասություն, ընդարձակ նախագասության գլխավոր անդամների լրացումները Յենթակայի լրացումները՝ ՎՈՐՈՇԻՉՉ, ՀԱՑԿԱՑՈՒՅԻՉ և ԲԱՑԱՑԱՅԻՉՉ, ստորոգյալի լրացումները՝ ԽՆԴԻՐՆԵՐ ՅԵՎ ՊԱՐԱԳԱՍՆԵՐ, ՈՒՂԻԴ ՅԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐ, ՏԵՂԻ, ԺԱՄԱՆԱԿԻ, ԶՈՓԻ ՈՒ ՔԱՆԱԿԻ, ԶԵՂԻ, ՊՈՅԱՇԱՐԻ, ՅԵՎ ՆՊՈՒՇԻ, ՀԻՄՈՒՆՔԻ ՅԵՎ ՆՊԱՏԱԿԻ ՊՈՐԱԳԱՆԵՐԸ: Այդ լրացումները վորպես լրացման լրացումներ և կողմանկի խնդիրներ: Լրացման լրացումներ, կողմանկի խնդիրներ և պարագաներ: Կապակցություն (համաձայնություն և շարագասություն):

Հարցական, պատմողական, բացականչական և հրամայական նախագասություններ. կետագրությունն այդ նախագասությունների մեջ, կոչական բառով նախագասություններ, ձայնարկությունների գործածությունը բացականչական նախագասությունների մեջ, կետագրություն. հաստատական և ժխտական նախագասություններ. կետագրություն:

Զեղչված անդամներով նախագասություններ, անդեմ՝ և անենթակա նախագասություններ, բազմակի կամ համազար անդամներով նախագասություններ, կետագրություն:

## Բ. ՀԱՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Բառ. վանկ, հնչյուն, տառ, հայերենի այլուրենը. ձայնավորներ և բաղաձայներ, հայերենի բաղաձայն հնչյունների սոսորաթանումները՝ ա) ըստ արտաքիրման տեղի և բ) ըստ վորակի՝ ըստ աղմուկի ու ձայնի մասնակցության չափի (ձայնեղ, խոռ և շնչեղ խոռ):

Հնչյունափոխություն. տողադարձ:

### Գ. ԲԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բառերի տեսակներն ըստ կազմության. արմատ և ածանց, պարզ, բարդ և ածանցափոր բառեր, հայերենի կարեռը ածանցները, նորագույն հապավումներ: Հիմք և վերջավորություն: Բառերի տեսակներն ըստ իմաստի և արտաքին հնչյունական կողմի՝ նույնանիշ, հականիշ, համանուն բառեր:

### Դ. ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ը ձայնափորի ուղղագրությունը. յա, յօ, յո, յի, այ, ոյ, եյ յերկնչյունների ուղղագրությունը. Ե ձայնակապի ուղղագրությունը: Ի այս իտ, իտ, իու, իո յերկնայնավորների ուղղագրությունը: Բաղաձայնների ուղղագրությունը. Ձայնափորների վերածվելը շնչեղ խոռերի. Ե և դ հնչյունների գերճայ այդ դեպքում: Ոտար բառերի ուղղագրությունը:

### Ե. ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Խոռքի մասերը. գոյական անուն, ածական անուն, թշվական անուն, գերանուն, բայ, մակրայ, կապ, շաղկապ և ձայնարկություն:

Գոյական անուն. առարկաներ, գոյական անուններ, գոյականների գործածությունը նախագասության մեջ. հատուկ և հատարակ գոյականներ, գոյականների հոլովումը և գոյականների առումները՝ անձ և առարկա. ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական և ներգոյական հոլովները և նրանց գունկցիաները. գոյականների թիվը. հոլովումներ, ի, ու, ան, ոչ, որ, վա, ց, հոլովումները, հարադիր գո-

յականների հոլովումը, գրաբար հոլովաձեւների մնացորդները. գոյականներու ածանցները և նրանց ուղղագրությունը:

Ա. ծ ա կ ա ն ա ն ո ւ ն. ածականի տեսակները՝ վորական և հարացաներ, հայեմատական աստիճաններ. ածականների գործածությունը նախագասության մեջ, ածականի գործածությունը գոյականի հետ. ածականի հոլովումը. ածականի վերածումը գոյականի և ընդհակառակը. ածականակերտ ածանցներ (ային, ական և այլն). ածականների ուղղագրությունը:

Թ վ ա կ ա ն ա ն ո ւ ն ն ե ր.—թվականի տեսակները՝ քանկան, դասական, և բաշխական. թվականների գործածությունը նախագասության մեջ, դասականների ածանցները. թվականների գործածությունը գոյականի հետ. թվականների հոլովումը. թվականների ուղղագրությունը. նախագասության մասնակի վերլուծությունն ըստ խոռքի մասերի:

## 2. ԲԱՆԱՎՈՐ ՅԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔ

Հողվածի գրական գեղարվեստական պարզ վերլուծություն (բանավոր), տեղեկատու զեկուցում (բանավոր). հողվածի բառվանդակության գրավոր շարագրություն. հողվածն ընդարձակելու և համառոտելու գրավոր հմտություն. նախորոք մշակված պլանի ոգնությամբ պարզ թեմայի մասին գրավոր շարագրություն (անցած նյութի, նոր ծանոթացած նյութի, կարդացած հողվածի, կինոյուժ, թատրոնում և այլուր տեսածի ու լսածի շուրջը, և այլն). ինքնակենսագրություն. պարզ բնութագրություն. քերականական և ուղղագրական գրավոր վարժություններ տանը և դասարանում. գործնական գրություններ (գիմում, հայտարարություն և այլն). թելագրություն (բացատրական, ազգային ստեղծագործական, ուսուցողական, ստուգողական): Միենույն նյութը 1-ին, 2-րդ և 3-րդ դիմքերով գրավոր պատմելու հմտություն:

## 3. ԳՐԲՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ

Ծանոթություն գրքին՝ անուն, հեղինակ, հրատարակչություն, հրատարակչության վայր, տարեթիվ, տիրաժ, առաջարան, ցանկ, բաժիններ, գլուխ և այլն:

Մանոթություն գրադարանից գիրք ստանալու կարգին, բացատրական և ուղղագրական բառարաններից ողտվելու հմտություն. կարգացած թէ ամբողջ հատվածի և թէ առանձին արդացի կարենոր և անհրաժեշտ տեղերն առանձնացնելու հմտություն. կարգացած հոդվածի եյական տեղերը վերնագրելու հըմառություն. Պարզ պլան կազմելու հմտություն:

## Ե.ԻԴ. ԴԱՍԱՐԱՆ

### 1. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԿԵՏԱՐՈՒԹՅՈՒՆ

ԴԵՐԱՆՈՒՆ, դերանունների տեսակները՝ անձնական, ցուցական, փոխադարձ, հարցական, հարաբերական, անորոշ, վորոշյալ, ժխտական կամ բացառական. դերանունների գործածությունը նախադասության մեջ, Դերանունների հոլովումը՝ Դերանունների ուղղագրությունը:

Բ.Ա.Յ. բայի ձեերը՝ գերբայական և յեղանակացին. դերայնների տեսակները՝ անորոշ, անկատար, ապառնի, վազակատար, հարակատար, յենթակայտական և ըդական. դրանց իմաստը և գործածությունը՝ բայի յեղանակային ձեր. գեմք, թիվ, ժամանակ, յեղանակ: Բայերի գործածությունը նախադասության մեջ: Խոնարհում. սահմանական, հրաժարական, ըդական, պայմանական և հարկադրական յեղանակները. սահմանական յեղանակի ժամանակակի ժամանակակի ժամանակակի, ժամանակակի ժամանակակի, ըդական, պայմանական և հարկադրական յեղանակների կազմությունը և ժամանակները. ուղղագրություն:

Բայի ել և ալ խոնարհումը (առաջին և յերկրորդ խոնարհում): Ուղղագրություն:

Բայի ժխտական խոնարհումը և նրա ուղղագրությունը, բայի սեսերը՝ ներգործական, կրավորական և չեղոք. բայի կերպերն ըստ կազմության՝ սոսկական, կրավորական, պատճառական, բազմապատկական. դալ, տալ, լալ, ուտել և լինել անկանոն բայերի խոնարհումը. ենալ, անալ, նել, և չել վերջացող բայերի խոնարհումը. գլխավոր և յերկրորդական (բաղադրյալ) ժամանակների:

Մակրայի տեսակները. մակրայի տարբերությունն ածականից. մակրայների կազմությունը և պատճական տեղեկություններ նրանց մասին. մակրայների գործածությունը նախադասության մեջ:

Կապ. կապերը, նախադրություն և հետադրություն. դրանց հոլովական խնդրառությունները և գործածությունը. կապական բառեր, պատճական տեղեկություններ կապերի մասին:

Շաղկապների տեսակները. համադասական և ըստրադասական:

ԶԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ. ձայնարկության առանձնահատկությունները մյուս խոսքի մասերի համեմատությամբ:

Խոսքի մասերի փոխագործ փոխանցումները:

Նախադասության լրիվ վերլուծությունն ըստ խոսքի մասերի:

### 2. ԲԱՆԱՎՈՐ ՅԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔ

Բանավոր զիկուցել պահնով կամ կոնսպեկտով. շարագրության մանրամասն գրավոր նախագիծ կազմել նախարանով և վերջարանով, զեղորվեստական յերկի գրավոր պարզ վերլուծություն կատարել. բանավոր և գրավոր պարզ համեմատական բնութագրություն գրել: Գրել ինքնուրույն շարագրություններ (ստեղծագործական և այլն), գործագրելով լեզվի պատկերավորության միջոցները՝ համեմատություն, փոխարերություն, մակդիր, այլաբանություն և այլն: Նկարագրական բնույթի ինքնուրույն գրավոր աշխատանքներ գրել. գրել տպագործություններ՝ կարգացած գրքերից, տեսած կամ լսած յերեվույթներից, ձանապարհորդությունից և այլն:

Ստուգողական թելագրություն. քերականական գրավոր վարժություններ, գործնական գրություններ (արձանագրություն, տեղեկանք, ստացական):

### 3. ԳՐԲՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ

Կոնսպեկտ կազմելու հմտություն. սահմանված թեմայի շուրջը զանազան գրքերից ցիտատներ հավաքելու հմտություն:

Կարգացած տեքստը համառոտելու և ընդարձակելու հմտություն:

## 1. ԳԵՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

### Ա. ԾԱՐԱՀՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ

Կրկնողություն, պարզ նախագասության շարահյուսությունը, պարագաների տեսակները, նախագասությունների կառուցվածքն ըստ կազմության:

Բարդ նախադասություններ, միավորյալ նախադասություններ, բազմակի յենթակայով և բազմակի ստորոգյալով միավորյալ նախադասություններ, կետադրություն:

Համադասական նախադասություններ, միջանկյալ նախադասություններ, կետադրություն:

Բարդ ստորադասական նախադասություններ, նրանց կազմությունը, գլխավոր և յերկրորդական նախադասություններ, յերկրորդական նախադասությունները վորպես գլխավոր նախադասության անդամներին փոխարինողներ և լրացնողներ, նախադաս, միջադաս և վերջրադաս յերկրորդական նախադասություններ, ստորադասական շաղկապների գործածությունը:

Կետադրությունը բարդ նախադասություններում, Յերկրորդական նախադասությունների տեսակները, Դերբայական լրացումը, կողմնակի յենթակա և կողմնակի լրացումներ, Բարդ նախադասության վերածումը պարզի՝ դերբայական լրացման և կողմնակի յենթակայի միջոցով, դերբայների գործածությունն այս գեպքերում, Առանձնացվող լրացումներ:

Ուղղակի խոսք, Ուղղակի խոսքի կետադրությունը, Ուղղակի խոսքի վերածումն անուղղակի խոսքի:

Տրամախոսություն:

Քերականական լրիվ վերլուծություն ըստ նախադասության տեսակների, ըստ նախադասության անդամների և ըստ խոսքի մասերի:

### Բ. Կ Ե Տ Ա Դ Բ Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ

Տրոհության, բացահայտության և առողանության նշանները, ստորակետի գործածության բոլոր գեպքերը, միջակետի և բութի գործածության բոլոր գեպքերը, գծիկը, գիծը և նրանց

գործածությունը հայերենում, բազմակետի, չակերտի, փակագծի հարցականի, բացականչական և յերկարացման նշանների գործածությունը հայերենում:

## 2. ԲԱՆԱՎՈՐ ՅԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔ

Ցեղույթներ ունենալիս կարողանալ մեջբերումներ կատարել, վերլուծական գրավոր շարադրություններ և համառոտագրություն գրել: Դրական տեսակների գրավոր վերլուծություն կատարել: Գյուղի և քաղաքի սոցիալիստական շինարարության զանազան մռահնաների գրավոր վերաբարձրությունը (ինքնուրույն աշխատանք): Բնության նկարագրություններ: Ազատ թեմայով շարադրություն: Քերականական և պարզ վոճարանական գրավոր վարժություններ: Ստուգողական թելազրություն:

### 3. ԳՐԳՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ

Կարդացածի կամ գրելիքի շուրջը թեղիսներ և բանաձեվեր կազմելու հմտություն (յեղակացություններ և առաջարկություններ): Բարդ և ընդգրածակ պլան կազմելու հմտություն, առձեռն բառարանից ոգովելու վարժություն, կարդացած գրքերի բիբլոգրաֆիա կազմելու հմտություն:

### 8-րդ Դ Ա Ս Ա Ր Ա Ն

## 1. ԳԵՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հնչյունաբանության, բառագիտության և ձեզաբանության համակարգումը՝ կրկնողության կարգով, նախադասությունները վերլուծելու միջոցով:

Կետադրություն. կետադրության նշանակությունը գրավոր խոսքի համար:

Առօգանության նշանները և նրանց գործածությունը, շեշտ, բացական նշան:

Բացահայտության նշանները և նրանց գործածությունը, բազմակետ, կախման կետեր, չակերտ, փակագծ, անջատման գիծ, միջացման գծիկ:

Տրոհության նշանները և նրանց գործածությունը. վերջակետ, միջակետ, ստորակետ, բութ, գիծ: Քերականական վերլուծություններ:

## 2. ԲԱՆԱՎՈՐ ՅԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔ

Ամբողջական գեղարվեստական յերկերի շուրջը գրավոր վերլուծական շարադրություններ, տիպերի վերլուծություն (գրավոր և բանավոր), զրոյների գրավոր և բանավոր բնութագրություններ, զեկուցումներ կազմելու և կարգալու պրիոնիերը (կոնսպեկտով և թեկիսով):

Առաջարկված թեմաների շուրջը շարադրություն գրելու հմտություն, գործադրելով պարզ հետազոտական բնույթ կրող յեղանակներ, նկարագրություններ, ուրվագծեր, ստուգողական թելագրություն:

## 3. ԳՐՔՈՎ ԱՇԽԱՏԱՆՔ

Գրքի մշակման և ոգտագործման լիակատար գիտություն, կոնսպեկտ, տեքստուալ (բնագրային) կոնսպեկտ, ոլլան (պարզ և բնդարձակ) համառոտություն, ցիտատներ (քարտային սինտեմ):

9-րդ Դ Ա Ս Ս Բ Ա Ն

## ԵԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, - ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ԳՐԱՎՈՐ ՅԵՎ ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔ

Շարահյուսության համակարգումը՝ համառոտ, ընդարձակ, պարզ, միավորյալ, բարդ համադաստական և բարդ ստորագաստական նախադասություններ, նախադասությունները վերլուծելու միջոցով կրկնել կետագրությունը (կանգ տանել առանձնապես ստորակետի գործածության վրա). վոճարանության տարբեր սեփերատներ կազմելու վարժություն, հեղինակների մասին գրավոր շարադրություն, գրական գեղարվեստական յերկերի գրավոր և բանավոր համեմատական բնութագրություններ, ստուգողական թելագրություններ: Նախադասության ծավալուն վերլուծություն:

10-րդ Դ Ա Ս Ս Բ Ա Ն

Քերականության, ուղղագրության և կետագրության ամփոփումը: Բանավոր գեկուցումներ և գրավոր գեփերատներ կազ-

մելու հմտություն, գրտղների համեմատական բնութագրություններ (գրավոր և բանավոր), գրական հոսանքների բնութագրում և համեմատություն:

Քերականական գրավոր վարժություններ, քերականական խնդիրների լուծում, ստուգողական թելագրություն:

## ԼԵԶՎԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԱՅՈՅ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԱՐԵՐ

8-րդ Դ Ա Ս Ս Բ Ա Ն

«Լեզուն նույնքան հին և, վորքան և դիտակցությունը, լեզուն հենց գործնական, ուրիշ մարդկանց համար զոյություն ունեցող, ուրեմն ինձ համար ևս զոյություն ունեցող իրական գիտակցություն ե» (Մարքս—Ենգելս), «Լեզուն մարդկային հազորդակցման կարելվորագույն միջոց» (Լենին), լեզվի ինչպես և գիտակցության ծագումը «Ուրիշ մարդկանց հետ հաղորդակցելու անհրաժեշտությունից ու կարիքից» (Ենգելս): Շարժումների լիդու և հնչական լեզու: Տարբեր լեզուների փոխազդեցությունները, նմանություններն ու տարբերությունները: Լեզուն փորձես զարգացման յենթակա սոցիալ-պատմական յերեվույթի: Փոխայալ բառերը և փոխառության սոցիալական պատճառները. հին փոխառություններ (յեկեղեցի, կաթողիկոս, բազին, դժոխք, մարգարե), նոր փոխառություններ (տրակտոր, կուլեկտիվ, ուղիութեայն, արտել և այլն):

Դրաբար լեզուն և միջին հայերենը վորպես ֆեոդալական հասարակության տարբեր շրջանների զրական լեզուներ: Միջին հայերենով գրված յերկերն ու նարնց տեսակները:

Հայ բուրժուական հասարակության կազմակերպման շլուջանը, աշխարհաբարը վորպես զրական լեզվի և բարբառների միասնություն: Աշխարհաբարի և զրաբարի պայքարը 19-րդ դարի կեսերին. զրական աշխարհաբարը, զրական հայերենի հաստատման հիմնական պատճառները: Նալլանգյանի և Նազարյանի լեզվագիտական լմբանումները: Աշխարհաբար զրականին նախորդող շրջանները. «Հյուսիսափայլ»-ի դերը նոր զրական լեզուն որինականացնելու և կերտելու ասպարիզում: Հայոց գեղարվես-

տական գրականության դերը գրական հայերենի զարգացման և  
տարածման գործում:

Նախահոկամբերյան գրական հայերենի ուղղագրությունը,  
նրա բնույթը:

### 9-րդ Դ Ա Ս Ա Բ Ա Ն

Հայերենի բարբառների հիմնական բաժանումը «կը», «ում»,  
«լ» և «ս» ճյուղերի, հայերենի բարբառների պարզ թվարկումն  
ու գաղափար նրանց մասին:

Գրական լեզվի և բարբառների փոխհարաբերությունը. հայ  
գրական լեզվի արելելյան և արևմտյան ճյուղերի տարրերու-  
թյունները:

### 10-րդ Դ Ա Ս Ա Բ Ա Ն

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Հեղափոխությունը և  
Հայաստանի խորհրդայնացումը:

Հայերենի ուղղագրության ոեֆորմը և նրա բնույթը:  
Զեռվ ազգային բովանդակությամբ սոցիալիստական կու-  
տուրայի գարգացման ստալինյան դրույթը Հայոց լեզվի զար-  
գացման նոր հստակը Հայաստանի խորհրդայնացումից հետո.

ա) Նոր բառերի ստեղծում.  
բ) Բառակաղմության նոր ձեերի ստեղծում.  
շ) Բառերի իմաստի փոփոխություն.  
դ) Բուրժուա-կղերական աշխարհայացք արտահայտող բա-  
ռերի մահացում.  
ե) Լեզվի գեմոկրատացում և մասսայականացում:

Հնկեր Ստալինը համաշխարհային միասնական լեզվի հար-  
ցի մասին:



3467  
40

Պատ. Խմբագիր՝ Ա.Բ. ՂԱՐԻՔՅԱՆ

Տեխ. Խմբագիր՝ Տ. ԶՈՒԱԼՅԱՆ

Սրբագրիչ՝ Վ. ԳՈՂՈՍՅԱՆ

Կոնտրոլ սրբագրիչ՝ Մ. ԳԱՐՈՒԿԵՑՅԱՆ

Հանձնված և արտադրության 1940 թ. հունիսի 11-ին

Ստորագրված և ապագրության 1940 թ. հունիսի 11-ին

Դրագիմանի մեջոր Ս.-313 հրատ. № 53, պատվեր № 165, տիրաժ 500

ՀՀ Ազգային գրադարան



NL0246509

430

10.190